20 մայիսի 2019 թվականի N 561 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 7-Ի N 1493-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի նոյեմբերի 7-ի «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի գործողության ոլորտը սահմանված մարմինների վրա տարածելու ժամանակացույցը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1493-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 2-րդ կետը «քաղաքացիական ծառայության» բառերից առաջ լրացնել «մինչ նոր չափանիշներով պաշտոնների գնահատումներն իրականացնելը և չափանիշներ սահմանելը՝» բառերով.

2) N 1 հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

4.	Պաշտպանության նախարարություն	
1)	քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնողների համար	2019 թվականի հունվարի 1
2)	զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար	իրավական հիմքի առաջացման օրվանից մեկ ամիս հետո

».

3) N 1 հավելվածի 5-րդ կետում «2019 թվականի հունվարի 1» բառերը փոխարինել «իրավական հիմքի առաջացման օրվանից մեկ ամիս հետո» բառերով.

4) N 1 հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

6.	Ռազմաարդյունաբերության կոմիտե	
1)	քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոն զբաղեցնողների համար	2019 թվականի հունվարի 1
2)	զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների համար	իրավական հիմքի առաջացման օրվանից մեկ ամիս հետո

».

5) N 1 հավելվածի 14-րդ կետում «2019 թվականի հունիսի 1» բառերը փոխարինել «համապատասխան օրենքն ուժի մեջ մտնելուց երկու ամիս հետո» բառերով.

6) N 1 հավելվածը 14-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15-րդ կետով.

«

15.	Փրկարար ծառայություն	2019 թվականի հուլիսի 1

».

7) N 2 հավելվածի 3-րդ կետից հանել «քաղաքացիական ծառայության բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոնների դասակարգմանը համապատասխան կազմված» բառերը.

8) N 2 հավելվածի 4-րդ կետում «անցկացնելու կարգն ուժի մեջ մտնելն» բառերը փոխարինել «անցկացնելն» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ